2016Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՔՎԵԱՐԿԵՆՔ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐԺԱՆԱՎՈՐ ԹԵԿՆԱԾՈՒ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՕԳՏԻՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 31 ՕԳՈՍՏՈՍԻ 2016Թ.
№ 26 (402)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Մեղրու զարգացումը՝ օրախնդիր ռազմավարություն:
ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

ԼՈՒՍԱԿԱՐ՝ ՀԱՅՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ. «Մեղրու գարածաշրջանի ողջ ներուժն ի մի բերելու եւ առավելագույնս նրա զարգացմանը ծառայեցնելու ցանկությունս անկեղծ է»

Խոսք ճանապարհի

Մեղրու տարածաշրջանի զարգացման նախադրյալներ, որոշ հիմնախնդիրների եւ առաջիկա ՏԻՄ ընտրությունների մասին է զրույցը Մեղրի նորաստեղծ համայնքի ղեկավարի թեկնածու Մխիթար Զաքարյանի հետ:

–Պարոն Զաքարյան, ՀՀ Ազգային ժողովը հունիսի 17-ին ընդունել է «««ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենսդրական փաթեթը: Այն ուժի մեջ է 2016թ. հուլիսի 11-ից: Մեղրու երբեմնի վարչական շրջանի բնակավայրերը միավորվել են մեկ՝ Մեղրի համայնքի մեջ: Դրանք են՝ Մեղրի, Ագարակ քաղաքները, Ալվանք, Այգեձոր, Գուդեմնիս, Թխկուտ, Լեհվազ, Լիճք, Կարճեւան, Կուրիս, Նռնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր, Տաշտուն գյուղերը: Փաստորեն, խոշորացումն արդեն օրենքով ամրագրված է, եւ Դուք հավակնում եք ղեկավարել նորաստեղծ այդ համայնքը:

– Ինչպես բազմիցս եմ հայտարարել, խոշորացումը ժամանակի հրամայականն է եւ ՏԻՄ կարողությունների բարձրացման դրական կողմերից մեկը: Տեղական իշխանության կարողությունների միավորումը, դրանց հնարավորությունների ընդլայնումը հաշվի առնելով՝ խոշորացումը հետագա աշխատանքների համար լավագույն ուղիներից մեկն է: Դա միանշանակ անհրաժեշտություն էր եւ մեր երկրի զարգացման տրամաբանական ուղիներից մեկը. առաջընթացի տրամաբանությունը հանգեցնում էր համայնքների խոշորացման գաղափարին:

– Մեղրու խոշորացումը կոնկրետ մեր մարզում կամ միգուցե հանրապետության ողջ տարածքում աննախադեպ է այն իմաստով, որ նորաստեղծ համայնքում ընդգրկվեց Մեղրու

էջ 4

Դիմանկար

Մեր վստահության քվեն՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

ՀԱՍՄԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ
Ագարակի արվեստի դպրոցի տնօրեն

Մեր համատեղ աշխատանքի ընթացքում Մխիթար Զաքարյանն իրեն դրսեւորել է որպես հմուտ ղեկավար, պատասխանատու անձնավորություն եւ պետական մտածողություն ունեցող անհատ: Ունենալով հաստատուն կամք եւ լինելով խիստ նպատակասլաց անձնավորություն՝ համայնքի առջեւ ծառացած յուրաքանչյուր կարեւոր խնդիր լուծելու համար արել է հնարավոր ամեն ինչ: Նրա պաշտոնավարման ընթացքում Ագարակ համայնքը բավականին մեծ առաջընթաց է ապրել: Քաղաքը դարձել է ավելի բարեւտես ու մաքուր, բնակիչներին մատուցվող ծառայությունները որակապես փոխվել են, քաղաքի բոլոր ենթակառուցվածքներն աշխատում են կուռ ու սահուն կերպով: Քաղաքապետի ուշադրության կենտրոնում է հատկապես մատաղ սերունդը: Երեխաների առողջության պահպանման, կրթության եւ դաստիարակության հարցերը նրա համար առաջնային են: Ամեն ինչ անում է, որ փոքրիկ ագարակցին իրեն զգա պաշտպանված ու երջանիկ, եւ հնարավորինս աջակցում է համայնքի բոլոր կրթօջախներին:

Ապացույցը՝ վերանորոգված եւ արդիականացված արվեստի դպրոցը, ըմբշամարտի դպրոցը, բարեկարգ մանկապարտեզը:

Մ.Զաքարյանը մեծ հայրենասեր է, նա անհրաժեշտության դեպքում հայ զինվորի կողքին է ու մշտապես աջակցում է Ագարակում տեղակայված զորամասին:

Մ.Զաքարյանի բնավորության լավագույն գծերից եմ համարում պատասխանատվության բարձր զգացումը, հաստատակամությունը, լավատեսությունն ու անաչառությունը: Բոլորս էլ գիտենք, որ պարոն Զաքարյանը դեռ շատ ծրագրեր ու անելիքներ ունի, որոնք, համոզված եմ, իրագործվելու են նրա տքնաջան աշխատանքի եւ հայրենիքի ու ժողովրդի հանդեպ մեծ նվիրվածության շնորհիվ:

■

ԿԱՐԵՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ
ՀՀ ԶՈՒ N զորամասի հրամանատար, գնդապետ

Զինված ուժերի հրամանատարության համար հատկապես հեշտ է գործունեությունը լիարժեք կազմակերպել այն համայնքներում, որտեղ ղեկավարն ուժեղ է եւ կարող է նեցուկ լինել բանակին թե՛ խաղաղ, եւ թե՛ պատերազմական իրավիճակներում:

Ագարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյանը եզակի ղեկավարներից է, որ իր գործնական քայլերով մեծ ներդրում է ունեցել մեր զորամասում՝ պաշտոնավարման ողջ ժամանակահատվածում աջակցելով հատկապես առաջնագծի հենակետերի ամրացման համար ինժեներատեխնիկական աշխատանքներ իրականացնելիս: Զինվորականության բարձրացրած յուրաքանչյուր հարցին, իր հնարավորությունների եւ լիազորությունների սահմաններում, մշտապես տվել է լուծում, առաջնային համարել դիրքերի ամրապնդումը, բանակի բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձեւավորումը, դժբախտ պատահարների դեպքում մարդկանց նեցուկ լինելը:

Համայնքում յուրահատուկ մոտեցում ունեն թե՛ սպաների ու զինվորների, թե՛ նրանց ընտանիքների հանդեպ:

Համայնքների խոշորացումն ինքնին ենթադրում է մեկ միասնական գաղափարի, այն է՝ համայնքի համաչափ զարգացում, շուրջ համախմբում, ինչի համար հարկավոր է փորձառու, խելամիտ եւ հայրենիքին նվիրված ղեկավար: Համոզված եմ՝ Մխիթար Զաքարյանի՝ Մեղրի համայնքի ղեկավար ընտրվելու դեպքում տարածաշրջանը կհասնի զարգացման նոր մակարդակի, քանզի նա պետական մտածելակերպ ունեցող, ուժեղ, կամային անհատականություն է: Նրա լավագույն հատկանիշներից մեկն էլ հասարակության տարբեր խավերի հետ հավասարաչափ շփվելն է, ինչը հետագայում ավելի կհեշտացնի մեկ միասնական գաղափարով առաջ շարժվելը:

Նա կարծես հասարակության հայելին է, քանի որ հստակ պատկերացում ունի տարբեր բնագավառներում առկա խնդիրների վերաբերյալ եւ իր գործունեությամբ փորձում է դրանց լուծում տալ: Մի խոսքով՝ Մխիթար Զաքարյանին ընկալում եմ նախ՝ որպես հասարակ քաղաքացի, լավ սյունեցի, այնուհետեւ՝ գործունյա ղեկավար, որ բազում ծրագրեր ունի իրականացնելու, ինչի համար, իհարկե, անհրաժեշտ են հասարակության աջակցությունն ու միասնականությունը: Համայնքի յուրաքանչյուր խնդրի պետք է նայել ոչ թե սեփական պրիզմայով, այլ ընդհանուրի, ինչն էլ կբերի մարզի զարգացմանը: Վստահ եմ՝ ընտրվելու դեպքում Մ.Զաքարյանը կարդարացնի իրեն վստահության քվե տված մարդկանց հույսերը:

■

Մեղրի համայնքի ղեկավարի թեկնածու Մխիթար Զաքարյանի նախընտրական ծրագրի հիմնադրույթները

Մեղրի նորաստեղծ համայնքի համար սկսվում է պատմական նոր շրջափուլ, որ լի է բազում խնդիրներով ու հակասություններով: Հետագա մարտահրավերներին դիմակայելու, դրանք պատվով հաղթահարելու, ծառացած խնդիրներին պատշաճորեն լուծում տալու գործում, բնականաբար, անփոխարինելի եւ մեծագույն դերը պատկանում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին եւ մասնավորապես՝ նրա ղեկավարին: Սեպտեմբերի 18-ին ազատ կամարտահայտմամբ ընտրված համայնքապետը միայն կարող է օժտված լինել համայնքն արդյունավետ ղեկավարելու հանրային ու բարոյական ռեսուրսով: Բնականաբար, անկեղծ չի լինի, եթե ասենք, որ ընտրվելու դեպքում առաջիկա հինգ տարում բոլոր հիմնախնդիրներին կտրվեն լիարժեք լուծումներ, բայց առանձնացնենք այն առաջնահերթությունները, որոնք գալիք հինգ տարվա ընթացքում կլինեն համայնքապետի եւ համայնքապետարանի ուշադրության կենտրոնում:

- Վեր հանել նախորդ տարիներին ՀՀ կառավարության՝ Մեղրու տարածաշրջանին առնչվող բոլոր որոշումները, ուսումնասիրել դրանց կատարման ընթացքը եւ, անհրաժեշտության դեպքում, այդ մասին տեղեկացնել ՀՀ կառավարությանը՝ համապատասխան առաջարկություններով: Մասնավորապես հետամուտ լինել ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 17-ի թիվ 417 որոշմամբ ընդունված Մեղրու տարածաշրջանի հիմնախնդիրների լուծման միջոցառումների ամբողջական կատարմանը:
- Խոշորացված Մեղրի համայնքում մեկ ընդհանրական՝ տարածքի համաչափ զարգացման շահի շուրջ համերաշխության, հանդուրժողականության, փոխադարձ հարգանքի մթնոլորտի ձեւավորում՝ անկախ քաղաքական հայացքներից, կուսակցական պատկանելությունից, բնակության վայրից:
- Համայնքի բնակիչների շահերի պաշտպանություն, կատարվող աշխատանքների հրապարակայնություն ու թափանցիկություն, աջակցություն քաղաքացիական հասարակության հետագա ձեւավորմանը:
- Համայնքապետի եւ համայնքապետարանի հանդեպ համայնքի բնակիչների հավատի ու վստահության ամրապնդում: Հնարավորինս ակտիվացնել համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարման մարմիններին առնչվող հարցերի քննարկմանն ու լուծմանը: Համայնքին առնչվող առավել կարեւոր հարցերի շուրջ կազմակերպել հանրային քննարկումներ:
- Ապահովել համայնքային բյուջեի հետագա աճ, սեփական մուտքերի կատարումը հասցնել 100 տոկոսի: Համայնքային բյուջեի եկամտային մասի սեփական մուտքերի ծավալների աճն ապահովելու նպատակով ավելի արդյունավետ օգտագործել համայնքի հնարավորությունները: Տարածաշրջանի հիմնախնդիրները լուծելու համար հայթայթել ֆինանսավորման հավելյալ աղբյուրներ, ներդրումների համար ստեղծել նպաստավոր ու գրավիչ պայմաններ:
- Գործող օրենսդրության սահմաններում աջակցել Հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցմանը եւ դրանից բխող՝ համայնքի բնակիչների շահերի պաշտպանությանը:
- Մշակել համայնքում իրականացվելիք երիտասարդական քաղաքականության հայեցակարգ, որի մեջ ներառել զբաղվածության խնդրի կարգավորման, ազատ ժամանցի եւ հանգստի խելամիտ կազմակերպումը, երիտասարդ ընտանիքների հիմնախնդիրների աստիճանական լուծումը, մոր եւ մանկան առողջության պահպանման ոլորտում բարենպաստ պայմանների ստեղծումը, երիտասարդության ռազմահայրենասիրական ու ֆիզիկական դաստիարակությունը եւ այլն:
- Խթանել «Մեղրի-Ագարակ» հիմնադրամի միջոցների ավելացմանը, որ հնարավորություն կընձեռի համայնքային շատ խնդիրներ լուծել, շահագրգռված լինել ստեղծածը պահպանելու համար:
- Հաստատել սերտ համագործակցություն միջազգային կառույցների տեղական գրասենյակների հետ: Հաշվի առնելով աշխարհագրական դիրքը՝ Իրանի Իսլամական Հանրապետության Զուլֆա քաղաքի հետ, որպես քույր քաղաքներ, համագործակցության հիմքեր ստեղծել:
- Համայնքի հոգեւոր-մշակութային բազմադարյան ավանդույթների պահպանումն ու հարստացումը Մեղրու հետագա զարգացման երաշխիքներից է: Այդ նպատակով վերականգնել նախկինում եղած ավանդույթները, այն է՝ արաքսամերձ հատվածում՝ Արեւիքի բերքի տոնը, բարձր լեռնային գոտիներում՝ Անասնապահի օրը, ինչպես նաեւ նշել բոլոր տոներն ու նշանավոր, հոբելյանական իրադարձությունները, տարածաշրջանում ստեղծել երկրագիտական (հայրենագիտական) թանգարան, պահպանել պատմամշակութային հուշարձանները, շենք-շինություններն ու տարածքները:
- Տարածաշրջանի՝ մանկահասակ երեխա ունեցող բնակավայրերում նախադպրոցական ուսումնական հաստատություններ (կամ ՆՈՒՀ-երի մասնաճյուղեր, խմբեր) բացելու հստակ ծրագիր կազմել: Համայնքի ղեկավար ընտրվելու դեպքում առաջիկա մեկ տարում, եթե ոչ ավելի վաղ, բոլոր համայնքներում նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորություն ստեղծել եւ այդ հաստատությունները գործարկել որպես Ագարակի կամ Մեղրու մանկապարտեզի մասնաճյուղեր: Ագարակի մանկապարտեզը կունենա Կարճեւան, Շվանիձոր, Ալվանք եւ Նռնաձոր մասնաճյուղերը, իսկ Մեղրու մանկապարտեզը՝ Լեհվազ, Լիճք, Տաշտուն, Վարդանիձոր մասնաճյուղերը: Հասնել նրան, որ նախադպրոցական կրթության ոլորտում տարբերություն չլինի համայնքի բնակավայրերի միջեւ:
- Արտադպրոցական դաստիարակությունը, որի նպատակն է սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելը եւ նրանց հոգեւոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական եւ կիրառական գիտելիքների ձեռքբերմանը նպաստելը, համայնքում ուշադրության կենտրոնում պահելու առաջնային խնդիրներից է: Հնարավորություն ստեղծել, որ համայնքի յուրաքանչյուր երեխա կարողանա օգտվել արտադպրոցական կրթություն իրականացնող հաստատություններից թե՛ տեղում, թե՛ համապատասխան դպրոցներ, կենտրոններ այցելելով:
- Հետամուտ լինել տարածաշրջանում համալիր մանկապատանեկան մարզադպրոց ունենալու խնդրի լուծմանը, դիմել պատկան մարմիններին՝ «Քաջարանի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ-ի մասնաճյուղ բացելու համար՝ մանավանդ հաշվի առնելով վերջին տարիներին Ագարակի ըմբշամարտի խմբակի ձեռքբերումները:
- Տարիներ շարունակ տարածաշրջանում տրանսպորտային միջոցների խնդիր

է եղել, երբ մարդիկ մի համայնքից մեկ այլ համայնք տեղաշարժվելու հնարավորություն չեն ունեցել: Համայնքների միավորմամբ լուծել նաեւ հասարակական տրանսպորտի խնդիրը: Կազմակերպել տարածաշրջանի բոլոր բնակավայրերի հետ կապված երթուղիներ՝ համապատասխան ժամանակացույցով եւ հարմարավետ փոխադրամիջոցներով:

- Հատկապես արդեն նախկին գյուղական համայնքներում աղբահանության հետ կապված լուրջ խնդիրներ կան: Կազմակերպել համայնքի ամբողջ տարածքի աղբահանում, սանմաքրում եւ բարեկարգում: Առաջնային համարել կենտրոնացված աղբահանության կազմակերպման համար համապատասխան միջոցների ձեռքբերումն ու հստակ ժամանակացույցով աշխատանքի իրականացումը: Առանձնահատուկ ուշադրություն դարձնել հանգստի գոտիների աղբահանությանը. համապատասխան աշխատակիցների միջոցով մշտապես վերահսկել տարածքների մաքրությունը:
- Հետամուտ լինել Մեղրու ինքնահոս ոռոգման համակարգի երկրորդ՝ Ագարակ-Կարճեւան հատվածի կառուցմանը, ներքին ցանցի հիմնանորոգմանն ու պատկան մարմինների հետ համապատասխան ծրագրերի իրականացմանը:
- Պաշտոնավարման ընթացքում փորձել լուծել փոքր եւ մեծ ջրամբարների կառուցման հարցը, քանզի նաեւ դրանից է կախված տարածաշրջանի հետագա զարգացման ընթացքը:
- Չնայած «Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերությունը բավականաչափ աշխատանքներ է կատարել տարածաշրջանում, բայց բարձրորակ եւ շուրջօրյա ջրամատակարարումը հատկապես Մեղրիում օրակարգային է, ուստի ուշադրության կենտրոնում պահել բնակիչներին բարձրորակ խմելու ջուր մատակարարելու հարցերը:
- Կրկին բարձրացնել Նռնաձորի (Նյուվադի) ռազմավարական նշանակության ճանապարհի հիմնանորոգման հարցը՝ նկատի ունենալով նաեւ, որ այն ԼՂՀ-ի սահմանի հետ հաղորդակցության կարեւոր ուղիներից է: Բացի դրանից՝ հստակ ծրագրեր կազմելով՝ հնարավորություններ ստեղծել Նռնաձորի հողային ու բնակլիմայական բացառիկ ռեսուրսներն օգտագործելու համար:
- Կուրիս, Գուդեմնիս, Վահրավար գյուղերի «փրկության» ծրագիր կազմել. չէ՞ որ այնտեղ բոլոր հնարավորությունները կան թե՛ անասնապահության, թե՛ այգեգործության զարգացման համար: Չնայած հեռավոր երազանք է թվում, բայց կազմել Վանք եւ Կալեր բնակավայրերի վերաբնակեցման ծրագիր:
- Առանձնահատուկ ուշադրություն դարձնել տարածաշրջանի՝ զարգացման հեռանկար, երիտասարդ ընտանիքներ ու կենսապահովման նպաստավոր պայմաններ ունեցող բնակավայրերից մեկի՝ Լեհվազի զարգացմանը: Հնարավորության սահմաններում լուծել ներհամայնքային ճանապարհների կառուցման, խմելու ջրի մատակարարման, երիտասարդների աշխատանքի, ժամանցի կազմակերպման, մշակութային եւ մարզական կյանքի աշխուժացման հետ կապված հարցերը:
- Զարկ տալ զբոսաշրջության զարգացմանը, հետամուտ լինել կառավարության համապատասխան որոշմամբ հաստատված զբոսաշրջության զարգացման ծրագրի՝ Մեղրու տարածաշրջանին վերաբերող հատվածի իրագործմանը, վերականգնել Մեղրու դիտարժան վայրերի, ինչպես ասենք, Լիճքի ջրվեժների հասանելիությունը:
- Կառավարությանն առաջարկ ներկայացնել Մանլեւի ենթաշրջանի բարեբեր հողերն արտոնյալ պայմաններով մշակելու նպատակով մարդկանց տրամադրելու համար, մանավանդ որ ջրի առկայությունը, հողի բարեպաստությունը բոլոր նախադրյալներն ունեն երաշխավորված բերք ստանալու համար: Իսկ տարածքներն օգտագործելու համար նախեւառաջ վերականգնել անմխիթար վիճակում գտնվող ճանապարհները:
- Ալվանք, Շվանիձոր գյուղերը Մեղրու պտղի շտեմարանն են: Նպաստավոր պայմաններ ստեղծել ինչպես այգեգործության զարգացման, այնպես էլ Մեղրու տարածաշրջանում երկրորդ պահածոների գործարանի կառուցման համար: Բերքի իրացման կազմակերպումը համայնքային իշխանության առանձնահատուկ ուշադրության կենտրոնում պահել եւ նրա գործունեության առանցքային ոլորտներից մեկը դարձնել:
- Բարձրադիր գոտիներում, հատկապես Լիճք, Տաշտուն գյուղերում, անասնապահության զարգացման հնարավորություններ ստեղծել:
- Տարածաշրջանում, բացի Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատից, հանքավայրերի հնարավոր շահագործման համար իրականացվում են երկրաբանահետախուզական աշխատանքներ: Լիազորությունների սահմաններում աջակցել հանքավայրերի խելամիտ շահագործմանը, որոնք աշխատատեղեր ստեղծելու լուրջ ներուժ ունեն: Խրախուսելի է այն հանքավայրերի գործունեությունը, որոնց շահագործման աշխատանքներն ընթացքի մեջ են, բայց հանքաքարի մշակում չի նախատեսվում, ինչը բնապահպանական խնդիրներից զերծ կպահի տարածաշրջանը:
- Ժողովրդագրական դրության բարելավման եւ բնապահպանական ոլորտին սպառնացող մարտահրավերներին դիմագրավելու նպատակով մշակել առաջնահերթ միջոցառումների ծրագիր՝ հատկապես հանքարդյունաբերական ձեռնարկություններից պահանջելով պոչուկային տնտեսության վնասների նվազեցում:
- Համայնքի տնտեսության մեջ իրական առաջընթացի ապահովումը համարել կարեւորագույն խնդիր: Խրախուսել փոքր եւ միջին ձեռնարկատիրության ոլորտում յուրաքանչյուր դրական նախաձեռնություն, քաջալերել ֆերմերային տնտեսության զարգացումը, տնտեսության մեջ իբրեւ գլխավոր առաջնայնություն համարել ոչ միայն աշխատատեղերի պահպանումը, այլեւ դրանց ստեղծումը: Պայմաններ ստեղծել նաեւ կանանց զբաղվածության հարցի լուծման համար: Պահպանել եւ առավել զարգացնել գործընկերային առանձնահատուկ հարաբերություններ «Ագարակի ՊՄԿ», «Զանգեզուրի ՊՄԿ», «Պոլիմեթալ ինթերնեյշնլ», ինչպես նաեւ այլ հանքարդյունաբերական ընկերությունների հետ՝ հաշվի առնելով նրանց բացառիկ դերը համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման, հոգեւոր-մշակութային կյանքի աշխուժացման գործում:
- Աջակցել «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը՝ լիազորությունների սահմաններում նպաստելով առողջապահական ծառայությունների բարելավմանը, կադրերի համալրմանը:

* * *

Վերոնշյալ հիմնադրույթները, անշուշտ, չեն կարող վերջնական ու ամբողջական ծրագիր համարվել, բայց դրանք իրատեսական են եւ համապատասխան քննարկումներից հետո կարտացոլվեն Մեղրու զարգացման հնգամյա ծրագրում: Նախընտրական քարոզարշավի ընթացքում եղած առաջարկություններն ու դիտարկումները հետագայում հաշվի կառնվեն, ինչը կամբողջացնի մեր ծրագիրը: Մինչ այդ ակնկալում ենք ստանալ նաեւ ընտրողների, հասարակական-քաղաքական ուժերի, հոգեւոր-մշակութային ոլորտի, գործարար աշխարհի, տնտեսվարող սուբյեկտների ներկայացուցիչների նկատառումները:

Մխիթար Զաքարյան
25 օգոստոսի 2016թ.

Մեր վստահության քվեն՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ



ԱՐՄՈ ԱՂԱՅԱՆ
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ էքսկավատորավար

Ուրախ եմ, որ Մեղրի համայնքի ղեկավարի թեկնածու է առաջադրվել Մխիթար Զաքարյանը: Վաղուց եմ ճանաչում նրան, կարելի է ասել, մեծացել է աչքիս առաջ: Ես 77 տարեկան եմ, եւ Ագարակը երբեւէ այսքան բարեկարգ ու գեղեցիկ չեմ տեսել: Եվ դա՝ Մխիթար Զաքարյանի բարեխիղճ կառավարման, Ագարակի հանդեպ սրտացավ վերաբերմունքի շնորհիվ:

Նրա օրոք ասֆալտապատվեցին մայթերը, ճանապարհները, վերանորոգվեցին արվեստի դպրոցը, մշակույթի պալատը եւ այլն: Հատկապես մեծ ուշադրություն է դարձրել աղբահանությանը, սանմաքրմանը. չէ՞ որ Իրանի Իսլամական Հանրապետությունից եկող զբոսաշրջիկի համար մեր երկրից ստացած առաջին տպավորությունը սկսվում է Ագարակից՝ հանրապետության հարավային դարպասից:

Հանքագործների մեծամասնությանը լսելով՝ կարող եմ հավաստիացնել, որ Մխիթար Զաքարյանը շատերի նախընտրած թեկնածուն է, քանի որ մշտապես ուշադրություն է դարձրել մեզ, առաջացած խնդիրների դեպքում խորհրդատու եղել: Վերջերս Ագարակի ՊՄԿ-ի աշխատավորների ցույցի ժամանակ նա կարողացավ ճիշտ ուղի մատնանշել՝ բացառապես օրենքի սահմաններում այդ հարցը լուծելու համար. չէ՞ որ ոչ միշտ է ժողովրդի պահանջը լիարժեք բավարարվում:

Նրա գլխավոր հատկանիշը ժողովրդականությունն է, պատասխանատվությունը եւ նպատակասլացությունը: Նա Մեղրու տարածաշրջանի տնտեսության սիրտը համարվող Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի հետ մշտապես համագործակցել է, ինչի շնորհիվ իրականացվել են բազում ծրագրեր: Կցանկանայի, որ ընտրվելու դեպքում, իր լիազորությունների շրջանակներում, շարունակի պաշտպանել կոմբինատի աշխատավորության շահերը, նպաստել աշխատատեղերի պահպանմանը:

Համոզված եմ՝ եթե նա ընտրվի Մեղրի համայնքի ղեկավար, կշարունակի նույն հայրենանվեր գործունեությունը, կզարգացնի մեր համայնքը: ■

ՌԱՖԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
Լեհվազ գյուղի բնակիչ

Սեպտեմբերի 18-ին կայանալիք ընտրություններին Մեղրի համայնքի ղեկավարի իմ թեկնածուն Մխիթար Զաքարյանն է, քանի որ Ագարակ քաղաքում կատարած աշխատանքները վստահություն են ներշնչում: Այն էական փոփոխությունները, որոնք իրականացվել են Ագարակում, անգամ կույր աչքով տեսանելի են:

Մեղրի նորաստեղծ համայնքում, իհարկե, խնդիրները բազում եւ բազմապիսի են, որոնց մի մասի լուծման համար Մխիթար Զաքարյանը հստակ պատկերացում ունի: Համարձակվում եմ ասել, որ Լեհվազ գյուղից արտագաղթի կանխման վերջին հույսը նա է, քանի որ հավատացած եմ՝ ընտրվելու դեպքում, եթե այն բոլոր աշխատանքները, որոնք կատարել է Ագարակում, Լեհվազում նույնպես կատարվեն, լեհվազցիները հաստատ իրենց վաղվա օրը նույնպես կկապեն մեր տարածաշրջանի հետ:

Լեհվազը տարածաշրջանի ամենամեծ գյուղերից է, եւ այստեղ տնտեսական բոլոր նախադրյալները կան թե՛ գյուղատնտեսության, թե՛ այգեգործության, թե՛ հանքարդյունաբերության զարգացման համար: Այսօր գյուղում երիտասարդության առողջ կորիզ կա, որի հանդեպ անհրաժեշտ է առանձին քաղաքականություն վարել, այն է՝ ստեղծել նախադպրոցական, արտադպրոցական կրթության զարգացման, հանգստի եւ ազատ ժամանցի ճիշտ կազմակերպման համար նախադրյալներ, ինչպես նաեւ աջակցել նրանց տարբեր նախաձեռնություններում, լիազորությունների սահմաններում՝ նաեւ աշխատատեղեր ստեղծել:

Գյուղի համար օրակարգային հարցերից են խմելու բարձրորակ ջուր ունենալը, գյուղամիջյան ճանապարհների հիմնանորոգումը, աղբահանությունն ու սանմաքրումը, ինչպես նաեւ գազիֆիկացումը:

Փորձը ցույց է տալիս, որ անհատի խելացի կառավարման շնորհիվ հնարավոր է հասնել ցանկալի արդյունքների, ուստի, վստահ եմ, Մ.Զաքարյանն ի վիճակի է լուծել մեր համայնքի շատ խնդիրներ:

Հատկապես քաղաքական դաշտում մեր երկրում խելացի լիդերների անհրաժեշտություն կա. Լեհվազի դեպքում կարող եմ ասել, որ հատկապես երիտասարդությանը հարկավոր է այնպիսի մարդ, ով հույս եւ հավատ կներշնչի, զարգացման ճիշտ ուղի կմատնանշի, կողջունի եւ կոգեւորի համայնքի զարգացմանը միտված յուրաքանչյուր նախաձեռնություն:

Առաջիկա ընտրություններում Մ.Զաքարյանին մաղթում եմ հաջողություն, բարձր քվե եւ արժանապատիվ հաղթանակ: Համոզված եմ՝ լեհվազցիների մեծամասնությունը կգնահատի նրա գործունեությունը, փորձը, ապագա ծրագրերը, որոնց իրագործման արդյունքում Մեղրին կդառնա մեր հանրապետության ծաղկուն համայնքներից մեկը:

Նա պետք է վերականգնի այն հույսն ու հավատը, որ մարդիկ երբեւէ ունեցել են գործունյա, ժողովրդի ցավով ապրող, իսկական հայրենանվեր ղեկավարի հանդեպ: ■

Խոսք ճանապարհի

ՄԽԻԹԱՐ ՋԱՔԱՐՅԱՆ.

«Մեղրու տարածաշրջանի ողջ ներուժն ի մի բերելու եւ առավելագույնս նրա զարգացմանը ծառայեցնելու ցանկությունս անկեղծ է»

էջ 1

Երբեմնի վարչական շրջանը: Միգուցե պետք է աստիճանաբա՞ր կատարվեր այդ գործընթացը, ինչպես օրինակ՝ Գորիսում կամ Սիսիանում:

– Գուցեեւ Գորիսում կամ Սիսիանում համայնքների խոշորացման փնջային տարբերակն արդարացված է, բայց թե՛ աշխարհագրական դիրքով, թե՛ մարդկային ռեսուրսով, թե՛ կառուցվածքային առումով Մեղրու տարածաշրջանի համար, համոզված եմ, այս տարբերակը միանշանակ ճիշտ է: Ի սկզբանե, մինչեւ սույն վարչատարածքային բարեփոխումն արդեն իսկ դժվար էր տարանջատել Մեղրի եւ Ագարակ համայնքների խնդիրները: Նախ՝ այդպես էլ անցած 20 տարում չվերացվեց այն դերը, որ պատմականորեն ուներ Մեղրին, ինչը բնական պետք է համարել. ոչ պաշտոնապես նա միշտ էլ կատարել է տարածաշրջանի կենտրոնի դեր:

Բացի դրանից՝ մեր հսկա գործատուն՝ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը, որ կազմում է տարածաշրջանի տնտեսության գերակշիռ մասը, արդեն իսկ միավորում է բոլորիս. կոմբինատի հանքերը Կուրիսի վարչական տարածքում են, հարստացուցիչ ֆաբրիկան՝ Կարճեւանի, պոչամբարը՝ Մեղրու, մնացած մասը՝ Ագարակի: Հաջորդ միավորող գործոնը Մեղրու մաքսակետն է, ինչպես նաեւ ջրային ռեսուրսներն են, որոնք առաջանում են Լիճք, Տաշտուն գյուղերի ջրահավաք ավազանում, իսկ սպառողները մնացած բոլոր բնակավայրերն են: Կրկնեմ ասածս՝ միանգամայն ճիշտ եմ համարում տարածաշրջանի բնակավայրերի միավորումը մեկ համայնքում. սա մեր զարգացման ընթացքի օրինաչափ հանգուցալուծումներից մեկն է եւ հետագա զարգացման գրավականը:

– Սեպտեմբերի 18-ին նորակազմ համայնքում տեղի կունենան ՏԻՄ ընտրություններ, եւ առաջադրվել է նաեւ Ձեր թեկնածությունը:

– Թեկնածությունս առաջադրել է Հայաստանի հանրապետական կուսակցությունը, ինչի համար շնորհակալություն եմ հայտնում կուսակիցներիս եւ հավաստիացնում, որ կարդարացնեմ նրանց վստահությունը:

– Ընտրվելու դեպքում Դուք կստանձնեք բավականին բարդ եւ պատասխանատու աշխատանք՝ դառնալով խնդիրներով լի նորակազմ համայնքի ղեկավար:

– Ես գիտակցաբար եմ մոտենում այդ հարցին եւ համոզված եմ, որ իմ կենսագրությունը, աշխատանքային, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման բնագավառում ձեռք բերած փորձը բավարար են այդ պաշտոնը ստանձնելու համար: Ունեմ հստակ պատկերացում Մեղրու տարածաշրջանի հետագա զարգացման վերաբերյալ, եւ համայնքի ազգաբնակչությունը, կարծում եմ, բոլոր հիմքերն ունի ինձ վստահելու չափազանց պատասխանատու այդ պաշտոնը: Մի խոսքով՝ ի վիճակի եմ արժանապատվորեն ղեկավարել նորաստեղծ համայնքը, կրել այդ ծանր բեռը:

– Ո՞րն է, ըստ Ձեզ, լավ ղեկավարի հաջողության երաշխիքը:

– Լավ ղեկավարի հաջողության գրավականը չի կարող միայն մեկ հատկանիշով պայմանավորվել, անհրաժեշտ է մի քանի հատկանիշների հանրագումար, այսինքն՝ հայրենի եզերքին անմնացորդ նվիրում, համապատասխան գիտելիքների պաշար, ղեկավարման ձիրք, աշխատանքային փորձ, պատասխանատվության բարձր զգացում: Նորաստեղծ համայնքի առջեւ ծառացած խնդիրները լուծելու եւ անհաջողության չմատնվելու համար անհրաժեշտ է, նախեւառաջ, այս բոլոր հատկանիշները միաժամանակ ունենալ: Իմ առջեւ ծառացած խնդիրների չափը լիարժեք պատկերացնում եմ եւ վստահ եմ ուժերիս վրա. ընտրվելու դեպքում կարճ ժամանակահատվածում կարդարացնեմ ինձ վստահության քվե տվողների սպասելիքները:

– Համայնքը, որը ցանկանում եք ղեկավարել, լա՞վ եք ճանաչում: Որո՞նք են Մեղրու տարածաշրջանի առջեւ ծառացած ամենախոշոր խնդիրները:

– Նախ ասեմ, որ այս տարածաշրջանն իր ուղնուծուծով ճանաչում եմ: Ամենագլխավոր խնդիրը, որ ավելի շատ Ագարակի շրջանին է բնորոշ, տնտեսության դիվերսիֆիկացիայի (բազմաճյուղ տնտեսություն) ցածր մակարդակն է: Ճիշտ է, բարեբախտություն է Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ ունենալը, բայց, մյուս կողմից էլ, ցավոք սրտի, պետք է արձանագրեմ, որ մեր տնտեսության 80%-ը պատկանում է նրան: Կարճ ասած, մեր տարածաշրջանի կյանքը, կենսագործունեությունը կախված են համաշխարհային շուկայում պղնձի գներից, ինչը վտանգավոր իրավիճակ կարելի է համարել: Հաջորդ կարեւոր խնդիրը ջրային ռեսուրսների կուտակումն է, ինչից կախված է գյուղատնտեսության զարգացումը: Իսկ գյուղատնտեսությունը հանքարդյունաբերությունից հետո մեր տարածաշրջանում ստեղծվող ներքին արդյունքի ամենամեծ ռեսուրսն է պարունակում: Լինելով հարավային դարպաս եւ սահմանակից Հայաստանի Հանրապետության հետ բարիդրացիական հարաբերություններ ունեցող երկրի՝ Իրանի Իսլամական Հանրապետությանը՝ չնչին չափով ենք օգտագործում այդ հնարավորությունը: Զարգացած տնտեսություն ունեցող այդ երկրի հետ մեր հարաբերություններն ավելի գործնական հարթակ պետք է բերել, ինչից կշահի ոչ միայն տարածաշրջանի, այլեւ մեր երկրի տնտեսությունը: Այնպես որ մեր հաջորդ խնդիրն ԻԻՀ-ի հետ հատկապես առեւտրի եւ զբոսաշրջության զարգացումը պետք է լինի: Առեւտրի զարգացմանը տարիներ առաջ նպաստել է սահմանամերձ շուկան, որն ինչ-ինչ պատճառներով փակվել է, իսկ զբոսաշրջությունը նախադրյալներ կստեղծի տեղում փոքր բիզնեսի զարգացման համար: Որպես ՀՀ քաղաքացի՝ առաջնային եւ մտահոգիչ խնդիր եմ համարում նաեւ երկրի ժողովրդագրական պատկերը, որը վերականգնելու համար բազում տարիներ են անհրաժեշտ: Իրականում երբեմն անհասկանալի է, երբ տնտեսապես ավելի նպաստավոր պայմաններ ունեցող Մեղրու տարածաշրջանում ծնելիության մակարդակն ավելի ցածր է, քան ավելի աղքատ շրջաններում: Այս հարցը, կարծում եմ, մասնագիտական լուրջ ուսումնասիրության կարիք ունի:

– Իսկ բնապահպանական խնդիրների մասին ի՞նչ կասեք:

– Ինչքան էլ ցավալի է արձանագրել, այնուհանդերձ Մեղրու տարածաշրջանի զարգացումն առանց Ագարակի ՊՄԿ-ի հնարավոր չէ պատկերացնել, ինչը, բնականաբար, որոշակի բնապահպանական խնդիրներ է առաջացնում, բայց գնալ ծայրահեղ քայլի, այն է՝ առաջարկել կոմբինատի փակում կամ գործունեության սահմանափակում, ճիշտ չի լինի: Այսօր աշխարհի գրեթե բոլոր երկրներում էլ հանքարդյունաբերությամբ զբաղվում են, բայց դրան զուգահեռ իրականացվում են նաեւ բնապահպանական լուրջ միջոցառումներ: Բնականաբար, երկրի սոցիալ-տնտեսական վիճակին զուգահեռ կարեւորվում է նաեւ բնապահպանությունը. ես համոզված եմ, որ մեզանում էլ արդեն լուրջ քայլեր են ձեռնարկվում այդ ուղղությամբ:

– Ընդհատելով Ձեր խոսքը՝ հիշեցնենք, որ, ըստ ՀՀ նոր սահմանադրության, պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը եւ վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով եւ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջեւ:

– Առհասարակ կողմ չեմ կտրուկ քայլերի. եթե հանքավայրը շահագործելու լիցենզիա է տրված, ուրեմն համապատասխան փորձագիտական եզրակացություն կա, որտեղ հաշվի են առնվել հնարավոր բոլոր ռիսկերը շահագործման ընթացքում, շրջակա միջավայրին, մարդկանց առողջությանը պատճառվող հնարավոր վնասները: Որպես տարածաշրջանի բնակիչ եւ հայ մարդ, արդեն ասացի, վերապահումով եմ վերաբերվում հանքավայրերը փակելու կամ դրանց գործունեությունը սահմանափակելու՝ որոշ բնապահպանների պահանջներին:

– Ի՞նչ կասեք հանրապետությունում եւ հատկապես Մեղրու տարածաշրջանում օրեցօր աճող հէկերի վերաբերյալ:

– Կոնկրետ ինձ համար հէկի տիրոջ աշխատած միլիոնավոր դրամն ու 1000 քառ. մետր հողատարածք ունեցող մարդու շահը միահավասար են: Ինչքան հէկի տիրոջ համար կարեւոր է շատ հոսանք արտադրելը, այնքան էլ կարեւոր է թեկուզ փոքր հողակտորը կամ այգին ոռոգելու խնդրի լուծումը:

– Մինչ ընտրությունը Դուք Ագարակի քաղաքապետն եք լինելու, արդեն քանի տարի է՝ Կարճեւան գետի հունով ջրի փոխարեն մոխրագույն զանգված է հոսում, եւ Ագարակ մտնելիս գարշահոտություն ենք զգում: Փաստորեն, ստացվում է, որ կոմբինատի պոչուկատարի հարցն այդպես էլ լուծում չի ստանում:

– Կոմբինատի պոչուկատարի վթարային հատվածը գտնվում է հիմնականում Կարճեւանի վարչական տարածքում եւ միայն մի փոքր հատվածը՝ Ագարակի տարածքում: Բայց համոզված եմ՝ պոչուկատարի հարցը կոմբինատի ղեկավարության ուշադրության կենտրոնում է եւ լուծում կստանա:

– Դեռեւս խորհրդային տարիներից սկսած Մեղրու տարածաշրջանը երկրի համար ունեցել է կարեւոր ռազմավարական նշանակություն, ինչը պահպանվում է նաեւ այսօր: Անկախության տարիներին նույնպես շատ քաղաքական գործիչներ շեշտը դրել են առանձնահատուկ վերաբերմունքի անհրաժեշտության վրա: Դուք նույնպես կարեւորո՞ւմ եք տարածաշրջանի հանդեպ տարբերակված վերաբերմունք ունենալը:

– Իմ ղեկավարման ութ տարվա ընթացքում, վստահորեն կարող եմ ասել, մեր տարածաշրջանը հանրապետական եւ մարզային իշխանությունների ուշադրության պակաս չի զգացել: Տարածաշրջանը զարգացնելու լավատեսական ծրագրերի հիմքերից մեկն էլ մարզպետ Սուրեն Խաչատրյանի մշտական աջակցությունն ու հովանավորությունն են: Իսկ այն բոլոր ծրագրերը, որոնք իրականություն են դարձել անցած տարիների ընթացքում, կարծում եմ, բավարար են, որ ապացուցվի վերոնշյալ դիտարկումս, բացի դրանից՝ պետք է հաշվի առնել նաեւ երկրի սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակը: Մենք ավելի շատ հատկացված միջոցները տեղում ճիշտ օգտագործելու խնդիր ունենք: Ընդհանրապես այն կարծիքին եմ, որ առանց Մեղրու շրջանի ՀՀ վաղվա օրը հնարավոր չէ պատկերացնել, եւ դա հասկանում են բոլորը՝ բարձրագույն իշխանություններից սկսած: Մենք սովոր ենք անընդհատ պահանջել, հեշտ ճանապարհով հասնել ուզածին, որը հաճախ խանգարել է մեր ներքին ռեսուրսներն արդյունավետ օգտագործելուն: Ներկա վիճակով լիովին բավարար եմ համարում իշխանությունների արձագանքը Մեղրու շրջանում առաջացած բոլոր խնդիրներին: Ի վերջո, մենք ՀՀ տարածքում ենք եւ համեմատություն անելով երկրի մի շարք շրջանների վիճակի հետ՝ կարելի է արձանագրել, որ ավելի լավ կարգավիճակում ենք:

Դեռեւս ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 17-ի թիվ 417 որոշմամբ ընդունվել է Մեղրու տարածաշրջանի հիմնախնդիրների լուծման միջոցառումների ծրագիր, որի մի շարք դրույթներ այսօր արդեն իրականություն են: Կարեւոր է նաեւ մանկավարժական ու բժշկական կադրերի համալրման համար համապատասխան բուհերում տեղեր հատկացնելու դրույթը, այլ հարց է այդ կադրերի՝ Մեղրի չվերադառնալը: Կարեւոր է երիտասարդների համար տարածաշրջանը գրավիչ դարձնելը: Կառավարության մեկ այլ որոշմամբ՝ արդեն քանի տարի է՝ պահուստային ֆոնդից գումար է հատկացվում գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին՝ Մեղրու տարածաշրջանում օգտագործվող ոռոգման ջրի դիմաց գանձվող վարձավճարների նկատմամբ 50 տոկոս զեղչ կիրառելու, ինչպես նաեւ անհատական ոռոգման պոմպերով ծախսված էլեկտրաէներգիայի արժեքը փոխհատուցելու նպատակով:

– Մեր կարծիքով՝ մեղրեցին, այնուամենայնիվ, ավելին պահանջելու իրավունք ունի, քանի որ դեռեւս խորհրդային տարիներին այս շրջանում, տարբեր պատճառներով պայմանավորված, մոտ 20 գյուղ է վերացվել: Մեղրեցին գյուղերի վերացման մտավախություն ունենալու հիմքեր ունի:

– Գուցե իմ այս հայտարարությունը մի քիչ հավակնոտ թվա, երազանքի նման, բայց Վանք եւ Կալեր գյուղերի վերաբնակեցումը կհամարեմ իմ հաղթանակներից մեկը. այնտեղ տնտեսական մեծ ներուժ, կենսաապահովման բոլոր նախադրյալները կան:

– Մեղրու շրջանում, որպես սահմանային տարածք, որպես սեպ՝ Ադրբեջանի երկու տարածքի ու Թուրքիայի միջեւ խրված, հատկապես քառօրյա պատերազմի օրերին նոր իրավիճակ ստեղծվեց, ամեն պահ սպասվում էր հարձակում: Այնպես որ՝ համայնքի բնակչության՝ տարածքում տեղակայված զորամասերի հետ համագործակցությունը գլխավոր առաջնահերթություններից է:

– Տարածաշրջանի անվտանգության ապահովումը երկու ուղղությամբ է իրականացվում. Իրանի Իսլամական Հանրապետության հետ սահմանի պահպանում, որ, համաձայն միջպետական պայմանագրի, ամենաբարձր մակարդակով իրականացնում է Մեղրիում տեղակայված ռուսական սահմանապահ ջոկատը՝ իր ուղեկալներով: Իսկ հայ-ադրբեջանական սահմանի նախիջեւանյան հատվածի պաշտպանությունն իրականացնում է Ագարակում տեղակայված հայկական զորամասը՝ համաձայն մշակված պլանի, եւ այդ առումով ազգաբնակչության ու համայնքային իշխանության խնդիրն է հնարավորության սահմաններում աջակցել եւ օժանդակել մեր զինված ուժերին: Բանակ-հասարակություն կապը բարձր մակարդակի վրա է մեր տարածաշրջանում եւ պետք է ավելի զարգացնել, քանզի Մեղրին անառիկ բերդ դարձնելը բոլորիս ամենօրյա աշխատանքի նպատակը պետք է լինի. ավելի ճիշտ դա համազգային խնդիր է: Առհասարակ երկրի պաշտպանությունը երբեւէ բավարար չի կարելի համարել: Չեմ մանրամասնում այն բոլոր աշխատանքները, որոնք անցած ժամանակահատվածում համատեղ իրականացրել ենք, բայց զինվորականության բարձրացրած յուրաքանչյուր հարցի լուծմանն աջակցելն ու օժանդակելը մեր սուրբ պարտականությունն ենք համարել ու համարում: Մանավանդ վերջին երեք տարում բավականաչափ աշխատանքներ են իրականացվել առաջնագծի հենակետերի ամրապնդման ուղղությամբ, բայց թշնա-

մին քնած չէ եւ նույնպես իրականացնում է քայլեր. այդ առումով, կարելի է ասել, մրցավազքի մեջ ենք, բայց չենք զիջում: Բանակի հետ համագործակցության համար անհրաժեշտ փորձ ունեմ եւ հստակ պատկերացնում եմ այդ ուղղությամբ հետագա անելիքները:

– Ոստիկանության ՊՊԾ գնդի շուրջ ծավալված հուլիսյան իրադարձությունները մեծ արձագանք գտան: Քաղաքական փորձագետները տարբեր գնահատականներ տվեցին ստեղծված իրավիճակին: Որպես քաղաքական գործիչ՝ ի՞նչ պետք է անել, որ մարդը որեւէ խնդրի լուծման համար զենքի ուժին չապավինի:

– Ստեղծված իրավիճակի համար քաղաքական վերլուծություններ անելը երկրի բարձրագույն իշխանությունների եւ քաղաքական փորձագետների գործն է: Վստահ եմ, որ առկա խնդիրներն իշխանությունների ուշադրության կենտրոնում են, եւ միջոցներ կձեռնարկվեն դրանք հարթելու առումով: Որպես ՀՀ քաղաքացի, ամենամեծ կորուստը համարում եմ ոստիկանության գնդապետի եւ ենթասպայի մահը, որն անդառնալի կորուստ է մեր ազգի համար. հատկապես ուժային որեւէ կառույցից մարդ կորցնելը շատ ցավալի է երկրի համար: Ես փորձագետ չեմ, եւ, կարծում եմ, եթե յուրաքանչյուր ոք զբաղվի իր գործով, նմանատիպ իրավիճակ չի ստեղծվի:

– Մեղրու ոռոգման ջրի ինքնահոս համակարգի արեւելյան թեւն արդեն իրողություն է, որ շատ կարեւոր է տարածաշրջանի զարգացման համար:

– Աշխատանքների զգալի մասն արդեն ավարտվել է, ներկայումս արաքսամերձ վեց համայնքում կատարվում է ոռոգման ջրի ներքին ցանցի բարելավում, որ շատ մեծ ձեռքբերում է, բայց ոչ՝ բավարար: Մեր հաջորդ քայլը կլինի ջրամբարների կառուցումը՝ առանց որոնց չեմ պատկերացնում տարածաշրջանի հետագա զարգացման ընթացքը:

– Իսկ պտուղ-բանջարեղենի իրացման հարցն ինչպե՞ս է լուծվում. դա էլ տարիներ շարունակ հիմնախնդիր է եղել

– Փառք Աստծո, մինչեւ այսօր մեր տարածաշրջանում պտղի իրացման խնդիր չկա, ինչպես ասենք, Արարատի կամ Արմավիրի մարզերում է լինում: Արտադրված բերքն ամբողջովին իրացվում է, բայց եթե հեռահար հայացք ձգենք, մեզ էլ կարող է սպառնալ այդ հարցը՝ պայմանավորված երկրի բնակչության թվի նվազումով, գնողունակության անկմամբ, ինչպես նաեւ իրացման ծավալի նվազմամբ: Դրան զուգահեռ, թեկուզ դանդաղ, բայց աստիճանաբար ավելանում է այգիների քանակը: Մեղրու պահածոների գործարանը քիչ քանակով բերք է ընդունում, մնացած մասն իրացվում է ներքին շուկայում: Իմ խորին համոզմամբ՝ պետք է քայլեր ձեռնարկել մեր բերքն արտահանելու ուղղությամբ, ինչի համար նախադրյալներ է ստեղծում եվրասիական շուկան: Ինչպես նաեւ տեղում անհրաժեշտ է երկրորդ պահածոների գործարան ունենալ, որ կնպաստի նաեւ աշխատատեղերի ավելացմանը. չէ՞ որ առաջընթացը ծնվում է առողջ մրցակցությունից: Անհրաժեշտ է ունենալ նաեւ գյուղմթերքի լոգիստիկայի կենտրոն՝ կա՛մ մեկը՝ բազմաֆունկցիոնալ, կա՛մ էլ մի քանիսը՝ մասնագիտացված:

– Մեղրու տարածաշրջան մտնելիս բավականին շատ չորացած այգիների հետքեր են երեւում: Համայնքի ղեկավարի թեկնածուն ի՞նչ ծրագրեր ունի գոնե մասամբ այգիները վերականգնված տեսնելու համար:

– Իհարկե, Մեղրու տարածաշրջանի այգիների երբեմնի հռչակն ամբողջովին վերականգնել հնարավոր չէ, բայց գոնե դրանց մի մասը կմշակվի, եթե հողագործը վստահ լինի, որ իր մթերքը կիրացվի: Իմ ծրագիրն այդ ուղղությամբ հետեւյալն է. ստեղծել պայմաններ հնարավորինս շատ բերքի իրացման համար: Մինչեւ չստեղծվեն այդ տնտեսական հիմքերը, այգին չի մշակվի: Ինչո՞ւ ենք մենք այսօր հպարտորեն նշում, որ հատկապես պտուղ-բանջարեղենի իրացման խնդիր չունենք, որովհետեւ Ձեր նշած հողատարածքները լիարժեք չեն օգտագործվում: Տնտեսապես շահութաբեր լինելու դեպքում մարդիկ իսկապես շահագրգռված կլինեն մշակել իրենց այգիները:

– Հյուսիս-հարավ ճանապարհի՝ դեպի մեր մարզ ծրագիրը գործնական հիմքերի վրա է դրվում հենց Մեղրու տարածաշրջանից: Որքանո՞վ այն կնպաստի համայնքի զարգացմանը:

– Մեզ համար կարեւոր ռազմավարական նշանակություն ունի նաեւ Կապան-Ծավ-Մեղրի միջպետական ճանապարհը, իսկ Հյուսիս-հարավ մայրուղու կառուցումը, նախեւառաջ, աշխատատեղեր կստեղծի, բացի դրանից՝ տնտեսական ակտիվությանը կնպաստի: Մի խոսքով՝ բոլորս սպասում ենք այդ ճանապարհի շինարարության մեկնարկին:

– Որպես հանրապետության հարավային դարպաս՝ Մեղրու տարածաշրջանն ունի՞ թաքնված, չօգտագործված ներուժ, որ ընտրվելու դեպքում կկարողանաք օգտագործել:

– Նախեւառաջ, զբոսաշրջության զարգացումը. զբոսաշրջիկների այցը, թեկուզ կարճատեւ, շատ ձեռնտու կլինի տարածաշրջանին, իսկ Հայաստանի եւ Իրանի կառավարությունների միջեւ ստորագրված՝ քաղաքացիների՝ առանց մուտքի արտոնագրի այցելությունների մասին համաձայնագիրը կխթանի նաեւ երկկողմ զբոսաշրջությանն ու կստեղծի առավել նպաստավոր պայմաններ ՀՀ եւ ԻԻՀ քաղաքացիների փոխայցելությունների համար: Սրանով փոքր բիզնեսի զարգացման համար էլ կստեղծվեն նպաստավոր պայմաններ:

– Երիտասարդության զարգացման հեռանկարի, նրան երկրամասին կապելու համար ի՞նչ ծրագրեր ունեք:

– Երիտասարդության՝ մեր ուզած տեսակի ձեւավորման, զարգացման սաղմերը դրվում են դեռեւս վաղ մանկությունից, եւ այդ հարցի լուծումը տեսնում եմ համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների սահմաններում: Համայնքի ղեկավարի խնդիրը նախադպրոցական կրթությունը ճիշտ կազմակերպելն է, երբ սկսում է ձեւավորվել անհատը: Մանկապարտեզ հաճախող երեխայի մեջ տեսնում եմ վաղվա քաղաքացուն եւ այդ է պատճառը, որ իմ ղեկավարման տարիներին առանձնահատուկ ուշադրություն եմ դարձրել նախադպրոցական, դպրոցական, արտադպրոցական կրթությանը, ձգտել ստեղծել բարեկարգ համայնք, որտեղ վերադառնալու ձգտում երիտասարդները մշտապես ունենան: Մեղրու տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման բոլոր ծրագրերը, նախեւառաջ, նպատակաուղղված են երիտասարդության գործունեության համար նպաստավոր պայմաններ ստեղծելուն: Կառավարության որոշման համաձայն՝ Մեղրու տարածաշրջանին հատկացված տեղերով մանկավարժական եւ բժշկական կրթություն ստացած կադրերից, ինչպես նշեցի քիչ առաջ, ոչ բոլորն են վերադառնում: Վստահ եմ, որ այս հարցը կարող է լուծվել օրենքի ուժով…

– Բազմիցս նշել եք, որ մանավանդ Ագարակում բնակարանային հարցը սրված է, եւ Դուք խրախուսում եք անհատական բնակարանաշինությունը:

– Ոչ միայն խրախուսում, այլեւ, կարելի է ասել, խնդրում ենք, որ մարդիկ տուն կառուցելու համար հողատարածք վերցնեն: Ագարակում վերջին տարիներին երկու անհատական տուն է կառուցվել: Մեր ծրագրերից մեկն էլ այն է, եթե իհարկե ավագանին համաձայնություն տա, որ գյուղական համայնքներում նրանց, ովքեր կցանկանան տուն կառուցել կամ թեկուզ վերանորոգել, որոշակի շինանյութ տրամադրենք: Իհարկե, դա մեծ բան չէ, բայց շինարարական աշխատանքների համար խթան կհանդիսանա: Բնակարանային հարցը մասամբ կլուծվի նաեւ Ագարակի ու Մեղրու նախկին հիվանդանոցների շենքերի շնորհիվ. Մեղրիում մարդիկ արդեն գնել են այդ բնակարանները, իսկ Ագարակում հարցը դեռեւս ընթացքի մեջ է:

– Համայնքների խոշորացումն արդեն օրենքով ամրագրված իրողություն է, բայց արդյո՞ք տեղային զգացումներ չե՞ն առաջանալու՝ ագարակցի, մեղրեցի, կարճեւանցի…

– Դա ապաշնորհ, անգործունյա մարդկանց հնարածն է: Մենք պետք է կարողանանք տարանջատել պետական, համայնքային եւ անձնական մտածելակերպը: Նույն տրամաբանությամբ կարելի է ասել, որ Մ.Զաքարյանը ծնվել է Ագարակի Սայաթ-Նովա փողոցում, եւ իր ութ տարվա ներդրումը միայն այդ տարածքում պետք է լիներ, կամ էլ նրա ծնողները Կարճեւանից են, եւ նա մշտապես առանձնահատուկ վերաբերմունք պետք է ունենար կարճեւանցիների հանդեպ: Համոզված եմ՝ նորաստեղծ համայնքի ղեկավար կընտրվի քաղաքականապես հասուն, խելացի մտածելակերպ ունեցող մարդը, ով կգիտակցի, որ ինքը Մեղրու շրջանի ղեկավարն է, որն էլ մեկ ամբողջական միավոր է: Եթե համայնքապետը սկսի տեղային մտածելակերպ բանեցնել, ակամայից նա իրեն հակառակորդ կհայտարարի մյուս համայնքներին: Ես պատկերացնում եմ համաչափ զարգացման նախադրյալները մեր շրջանում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր բնակավայրի ողջ ներուժը: Իսկ քաղաքների կամ գյուղերի միջեւ տարբերություն դնելը ղեկավարման գործընթացում պարտություն կրելու առաջին գրավականներից է:

– Հասարակական, քաղաքական դաշտում ընդդիմախոսներ, հակառակորդներ շա՞տ ունեք:

– Ինձ համար նշանակություն ունի միայն առողջ քննադատությունը, որ օգնում է ավելի սթափ դատել: Ես շնորհակալ կլինեմ, եթե գտնվեն մարդիկ, ովքեր կմատնանշեն աշխատանքի մեջ իմ թույլ տված սխալները՝ իհարկե, միայն համապատասխան հիմնավորումներ ներկայացնելով: Ցավոք սրտի, սթափ քննադատություն մինչ այժմ միայն կողմնակիցներիցս եմ լսում: Ցանկալի կլիներ, որ նաեւ հակառակորդներս, եթե այդպիսիք իսկապես կան, նույնպես ներկայացնեին իրենց հիմնավորված դիտողությունները, որոնք պատրաստ եմ հաշվի առնել: Իմ գործընկերներին մշտապես ասել եմ՝ յուրաքանչյուր ճշմարտություն ծնվում է առողջ քննարկման ընթացքում. կա՛մ դուք պետք է ապացուցեք, որ ճիշտ եք, կա՛մ՝ ես:

– Ինչպիսի՞ ընտրություններ եք ակնկալում սեպտեմբերի 18-ին:

– Անկեղծ ասած, ակնկալում եմ բարձր

էջ 7

ԱՅՑԵՔԱՐՏ

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ՀԱՅԵՔԱՐՏԻ ԱՐԽԻՎԻՑ

Մխիթար Զաքարյան. *ծնվել է 1971թ. Ագարակ քաղաքում: 1989թ. Ագարակի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի ժողտնտեսության ինստիտուտը: Թողնելով ուսումը՝ 1993թ. կամավոր անցել է զինվորական ծառայության Կապանի մոտոհրաձգային բրիգադում: Ծառայության ընթացքում մասնակցել է մի շարք մարտական գործողությունների, ինչի համար հետագայում արժանացել է «Մարտական ծառայության համար», «Վազգեն Սարգսյան» մեդալների: Ներկայումս ՀՀ զինված ուժերի պահեստազորի լեյտենանտ է:*
1995-2001թթ. աշխատել է ՀՀ պետեկամուտների կոմիտեի Սյունիքի տարածքային հարկային ծառայության օպերատիվ հետախուզական վարչությունում՝ տեսուչ, օպեր-լիազոր, 2001-2005թթ.՝ ՀՀ մաքսային ծառայության մաքսանենգության դեմ պայքարի վարչության Մեղրու մաքսակետի խմբի ղեկավար:
2007-2008թթ. եղել է «Վիլա տրանս» ՍՊԸ-ի տնօրեն:
2008թ. ընտրվել է Ագարակի քաղաքապետ, 2012թ.՝ վերընտրվել:
2011թ. պաշտպանել է «Հարկային քաղաքականությունը եւ լեռնամետալուրգիայի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:
2005 թվականից ՀՀԿ անդամ է:
Ամուսնացած է, ունի երկու որդի, երկու դուստր:

Մ.ԶԱՔԱՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ՀԱՅԵՔԱՐՏԻ ԱՐԽԻՎԻՑ

Ծնողները՝ Սեյրան Զաքարյանն ու Արմիկ Ղազարյանը

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ՀԱՅԵՔԱՐՏԻ ԱՐԽԻՎԻՑ

Կինը՝ Վարդուհին՝ ավագ դստեր՝ Շահանեի հետ

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ՀԱՅԵՔԱՐՏԻ ԱՐԽԻՎԻՑ

Ատոմը, Արսենն ու Աննան մոր հետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ԳՅՈՒՂԵՐԸ

Կուրիս

Շվանիձոր

Կարճեւան

Ալվանք

Վարդանիձոր

Վահրավար

Լեհվազ

Նռնաձոր

Տաշտուն

Գուդեմնիս

Լիճք

Հետարաշ հայացք

Ագարակի քաղաքապետարանի 2009-2016թթ. կատարած աշխատանքների հաշվետվություն

Մխիթար Զաքարյանի պաշտոնավարման ընթացքում Ագարակ համայնքի զարգացման առաջնային խնդիրներն են եղել՝ բնակչության կենսապայմանների բարելավումը, քաղաքային ենթակառուցվածքների արդիականացումն ու անխափան աշխատանքի ապահովումը, ծախսերի օպտիմալացումը, տնտեսության հնարավորինս ակտիվացումը: Նրա պաշտոնավարման տարիներին զգալի առաջընթաց է արձանագրվել համայնքի բոլոր ենթակառուցվածքներում:

- 2009 թվականից ի վեր քաղաքում իրականացվել է ավելի քան 4 կմ առավել բանուկ ճանապարհահատվածների ասֆալտապատում եւ հարակից տարածքի բարեկարգում, ինչի շնորհիվ այսօր ներհամայնքային նշանակության ճանապարհների 52 տոկոսն ասֆալտապատ է:
- «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի միջոցներով հիմնանորոգվել է խմելու ջրի ներքին ցանցը, եւ քաղաքի բնակչությունն ապահովվել է շուրջօրյա ջրամատակարարմամբ՝ նախկին արտեզյան ջրերի փոխարեն ստանալով բարձրորակ ջուր: 2010-2011թթ. կատարվել են «Ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգի բարելավում» ծրագրով նախատեսված աշխատանքները, կառուցվել են քաղաքի խմելու ջրի մաքրման կայանը եւ օրվա կարգավորիչ ջրամբարը:
- Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի (ներկայումս՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ) եւ «Մեղրի-Ագարակ» հիմնադրամի ու «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ի 10 տոկոս համաներդրմամբ ամբողջովին վերանորոգվել է Ագարակի մշակույթի պալատը:
- Ագարակ քաղաքում ստեղծվել է արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջ փրկարարական ծառայության Ագարակի ջոկատ: 2010 թվականից գործում է ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Մեղրու բաժնի Ագարակի բաժանմունքը:
- 2011թ. մայիսի 25-ից «Հայբիզնես» բանկի Ագարակի մասնաճյուղն իր ծառայություններն է մատուցում Ագարակի եւ հարակից գյուղերի բնակչությանը:
- 2012-2014թթ. «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի, «Մեղրի-Ագարակ» հիմնադրամի միջոցներով (18 մլն 160 հազար դրամ), ինչպես նաեւ քաղաքապետարանի ֆոնդային միջոցներով (87 մլն դրամ) հիմնանորոգվել են Ագարակի մանկապարտեզի 1-ին մասնաշենքը, հարակից խաղահ-

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ Մ.ԶԱՔԱՐՅԱՆԻ ՖՈՏՈԱԼԲՈՄԻՑ

Վարչապետ Հովիկ Աբրահամյանը Ագարակում (21.11.2015թ.)

24.02.2016թ. Սյունիքում էր ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Ն. Փ. Սեյեդ Քազեմ Սաջադը

«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բացումը արտակարգ դեպքերի նախարարությունում (06.02.2016թ.)

Ագարակ

- ռապարակը, երկրորդ մասնաշենքի 1-ին հարկը եւ մարզադահլիճը, ինչպես նաեւ ձեռք է բերվել գույք:
- Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով (108 մլն դրամ), արդի պահանջներին համապատասխան, հիմնանորոգվել է Ագարակի արվեստի դպրոցը:
- 2016 թվականից մեկնարկել են Ագարակ քաղաքի գազիֆիկացման աշխատանքները:
- Կատարվել են քաղաքի լուսավորության, կանաչապատման մեծածավալ աշխատանքներ: Հիմնանորոգվել են քաղաքապետարանի վարչական շենքը, քաղաքի կանգառները, կառուցվել մանկական խաղահրապարակներ:
- «Լեռնահայաստան» հիմնադրամի, համայնքապետարանի միջոցներով Ագարակի միջնակարգ դպրոցում շահագործման է հանձնվել ժամանակակից չափանիշներին համապատասխան գրադարանը:
- 2012թ. Ագարակն արժանացել է «Տարվա լավագույն համայնք» մրցանակին:

«Մեղրի-Ագարակ» հիմնադրամի միջոցներով կատարված աշխատանքները

«Մեղրի-Ագարակ» հիմնադրամի միջոցներն արդեն մի քանի տարի է՝ գոյանում են Ագարակ համայնքի, տեւական ժամանակ նաեւ՝ Կարճեւան գյուղի աշխատավորության, կամավորության սկզբունքով՝ աշխատավարձի 1 տոկոս մասնակցության վճարից: Նախկինում միջոցներ է տրամադրել նաեւ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ն, իսկ մինչեւ 2009թ. մասնակցել է նաեւ Մեղրու փոքր հիմնարկ-ձեռնարկությունների աշխատավորությունը:

Ստեղծման օրվանից մինչ օրս հիմնադրամի միջոցներով Ագարակ համայնքում բավականին շատ աշխատանքներ են իրականացվել, որոնց շնորհիվ այսօր ունենք ավելի բարեկարգ, մաքուր եւ ակնահաճո համայնք:

- Հիմնանորոգվել են Ագարակի N1 մանկապարտեզի զույգ մասնաշենքերը, ձեռք բերվել մանկական մահճակալներ, գույք, սարքավորումներ, գրենական պիտույքներ եւ այլն, վերանորոգվել է բակը (119 մլն 491 հազար դրամ):
- Ագարակի միջնակարգ դպրոցում վերանորոգվել են դասասենյակներ, ճաշարանը, փոխվել դուռ-լուսամուտներ, ձեռք բերվել անհրաժեշտ գույք ինչպես դասասենյակների, այնպես էլ՝ ճաշարանի համար (4 մլն 411 հազար դրամ):
- Իրականացվել է Ագարակի Չարենցի փողոցի լուսավորության եւ կանաչապատման ծրագիրը (183 հազար դրամ), բարեկարգվել քաղաքի մուտքի կանգառը (8 մլն 423 հազար դրամ), իսկ Սայաթ-Նովա 3/2 հասցեում՝ շահագործման հանձնվել մանկական խաղահրապարակ (համաներդրմամբ):
- Վերանորոգվել է ՀՀ ՊՆ 50869 զորամասի սանհանգույցը, եւ դիրքերում կառուցվել է ջրագիծ (4 մլն 60 հազար դրամ):
- Արտադպրոցական կրթության (սպորտ, մշակույթ, ճամբար, տրանսպորտային ծախսեր) բնագավառին ընդհանուր առմամբ հատկացվել է 51 մլն 346 հազար դրամ:
- Տրամադրվել է դրամական օգնություն պատերազմի վետերաններին, սոցիալապես անապահով, ինչպես նաեւ զոհված ազատամարտիկների ընտանիքներին (10 մլն 191 հազար դրամ):
- Լեհվազի մանկապարտեզի վերանորոգման համար տրամադրվել է 10 մլն 651 հազար դրամ:
- Նռնաձորի միջնակարգ դպրոցի վերանորոգման համար տրամադրվել է 5 մլն 924 հազար դրամ:
- Կարճեւանի հիմնական դպրոցի տանիքի վերանորոգման համար տրամադրվել է 4 մլն 376 հազար դրամ:

Իհարկե, հիմնադրամի միջոցներով իրականացված աշխատանքների որոշակի մասն է ներկայացված սույն հաշվետվության մեջ: Կարծում ենք՝ այսքանն էլ բավական է հիմնադրամի արդյունավետության վերաբերյալ պատկերացում կազմելու համար: Դեռեւս կան բազում ծրագրեր, որոնց իրագործման մեջ զգալի ներդրում կունենա նաեւ հիմնադրամը: ■

Մեր վստահության քվեն՝ ՄԽԻԹԱՐ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ

Դիտարկում

ՆԱԻՐԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մանկավարժ

Թեեւ Ագարակ քաղաքի բնակիչ չեմ, սակայն բազմիցս մասնակցել եմ այդ համայնքում կազմակերպված մշակութային միջոցառումներին: Ակնառու էր այն փաստը, որ քաղաքապետարանի անմիջական հոգացողության եւ հովանավորության ներքո էր համայնքի մշակութային կյանքը:

Վերջերս ունկնդիր էի Ագարակի արվեստի դպրոցի «Մկնիկ հարսնացուն» մանկական օպերայի բեմադրությանը: Մեծ ակնածանքով վերաբերվեցի Մխիթար Զաքարյանի ներկայությանն այդ բեմադրությանը: Առհասարակ ակնհայտ է, որ նա իր ուշադրության ներքո է պահում համայնքի մարզակրթական, երաժշտական եւ պարարվեստի բնագավառները՝ առաջնորդվելով սկզբունքով, որ երեխաները չպետք է օտարվեն ազգային ռազմարվեստի եւ երաժշտական բնագավառների ավանդույթներից:

Լինելով կրթամշակութային բնագավառի գործիչ՝ ես նույնպես կարեւորում եմ մեզ փոխարինող սերնդի գեղագիտական դաստիարակությունը:

Համոզված եմ, որ Մխիթար Զաքարյանը կշարունակի մշակութային իր քաղաքականությունը տարածաշրջանի մյուս համայնքներում եւս՝ նպաստելով բնակիչների եւ առանձնապես երիտասարդների զբաղվածության ու մշակութային գործունեության ակտիվացմանը:

Մեկ հանգամանք եւս պետք է նշեմ. հաճախ եմ տեսել, որ Մխիթար Զաքարյանը պատանիների հետ ռազմական բնույթի խաղեր եւ արշավներ է կազմակերպում՝ կարեւորելով պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Հասկացա, որ հայրենաճանաչություն սերմանելով, անձնական օրինակով նա դաստիարակում է սեր դեպի ծննդավայրը, ուղղորդում երիտասարդներին ծննդավայրը չլքելուն… ■

Խոսք ճանապարհի

ՄԽԻԹԱՐ ՋԱՔԱՐՅԱՆ.
«Մեղրու տարածաշրջանի ողջ ներուժն ի մի բերելու եւ առավելագույնս նրա զարգացմանը ծառայեցնելու ցանկությունս անկեղծ է»

էջ 5 քվե՝ անկախ մրցակից ունենալուց կամ նրա բացակայությունից, որը ոչինչ չի փոխի իմ մարտավարության եւ նախընտրական քարոզարշավի մեջ: Ես կներկայացնեմ իմ պատկերացումները տարածաշրջանի զարգացման վերաբերյալ, եւ, կարծում եմ, անցած ճանապարհս, գիտելիքներս, աշխատանքային փորձս մեր ազգաբնակչության համար խոսուն վկաներ են: Բարձր քվեն ինձ համար արդյունավետ գրավական կլինի. ինչքան բարձր՝ այնքան ընտրողի առջեւ մեծ է պատասխանատվությունը: Տեսականորեն ընտրելու եւ ընտրվելու իրավունք ունի Մեղրու տարածաշրջանի մոտ ինը հազար ընտրող: Ես այն կարծիքին չեմ, որ պաշտոնը հավերժ է, եւ մարդը կարող է անփոխարինելի լինել: Շատ կցանկանայի արժանի մրցակից ունենալ, որի ներկայացրած ծրագիրը միգուցե եւ հետագայում համատեղ աշխատելու հիմք դառնար: Իմ հնարավոր մրցակիցը, տարածաշրջանի համայնքների նախկին ղեկավարները, ավագանու անդամները, հասարակության մեջ հարգանք վայելող անձինք կարող են դառնալ համախոհս ընտրապայքարում եւ հետագայում:

– Ընտրվելու դեպքում կադրային ինչպիսի՞ քաղաքականություն կվարեք:

– Իրենց հող ու ջրին անմնացորդ նվիրված, բարոյական եւ մասնագիտական բարձր հատկանիշներով օժտված անձինք պետք է լինեն աշխատակազմի անդամ: Մեխանիզմն այնպիսին կլինի, որ ըստ պատշաճի աշխատանքների վերահսկողություն կկատարվի: Քարանձավային մտածելակերպ եմ համարում ծանոթ-բարեկամին աշխատանքի ընդունելը՝ առանց հաշվի առնելու նրա մասնագիտական կարողությունները, դա իմ գործելաոճը չէ: Վստահ եմ, որ ճիշտ քաղաքականության շնորհիվ մեկ տարի հետո Մեղրի համայնքում կատարված աշխատանքների պտուղները կերեւան:

– Ձեր խոսքն ընտրողներին:

– Իմ այցեքարտը եղել եւ մնում է կենսագրությունս, եւ, կարծում եմ, որ այն ինձ վստահելու երաշխիքներից մեկն է: Կարող եմ ասել նաեւ, որ Մեղրու տարածաշրջանի ողջ ներուժն ի մի բերելու եւ առավելագույնս նրա զարգացմանը ծառայեցնելու ցանկությունս անկեղծ է:

– Մեղրու շրջանի ՏԻՄ ընտրություններից երեք օր հետո մեր երկրում կնշվի անկախության 25-ամյակը: Ո՞րն է մեր երկրի առջեւ ծառացած ամենամեծ մարտահրավերը:

– Մեր ամենամեծ ձեռքբերումն անկախ պետականության վերականգնումն է, եւ այսօր հպարտորեն կարող ենք նշել, որ ունենք անկախ պետություն: Հաջորդ ամենամեծ ձեռքբերումը հայոց բանակն է՝ մեր անվտանգության գլխավոր երաշխավորը: Ամենամեծ խնդիրն առաջիկա տարիների ընթացքում ձեռք բերածը պահպանելն ու այն զարգացնելն է. տեղում դոփելով՝ կկորցնենք նաեւ արդեն ունեցածը: Առավելագույն նվիրումով յուրաքանչյուրս կատարենք մեր առջեւ դրված պարտականությունները, եւ, համոզված եմ, արդյունքն ակնհայտ կլինի:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բիբլիական եզերք

Մեղրի. որ այնքա՞ն հին եւ այսքա՞ն նոր...

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Գ. ՍԱՀԱԿՅԱՆԻ

Երեւանի գեղագիտության ազգային կենտրոնի Մեղրու մասնաճյուղի շենքը

Ø»ÕñÇ

Երկնի կապույտից ամպերն են ծորում՝
Թզից ծորացող մեղրի նման,
Ու ջերմությունից նոներն են ճաքում՝
Արեւից ճաքած քարերի նման:

Աղքայախնձորն արեւով լցվում,
Օդը արեւից հոգնում է, ցնցվում,
Եվ լավաշ հացն էլ արեւից հունցվում
Ու արեւի պես փաք էլ՝ մատուցվում:

Երկնի կապույտից ամպերն են լողում,
Լեռան ծերպերից արեւն է շողում,
Հասուն բերքի պակ ծառերն են դողում
Ինչպես սերմերը՝ փաքացող հողում:

Ու Մեղրագեղը՝ զուգված մի փերի,
Գնում է փարվում Արաքսին գերի,
Եվ ուժը նրանց խենթ ալիքների
Հոկում է կողը կուռ քարափների:

Եվ քարանվագ եզերքը Մեղրի
Քարի մեղեդին ձոնած աշխարհին՝
Ժայռերի ուսին բազմած բերդերի
Կարոտն է հողում համայն հայերին

ԿԱՄՈ ԱՐԱՔՍ

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Գ. ՍԱՀԱԿՅԱՆԻ

Մեղրու բերդի վեց աշտարակներից երկուսը



ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Գ. ՍԱՀԱԿՅԱՆԻ

Մեղրու Սբ Աստվածածին եկեղեցին

Լիճքի ջրվեժներից մեկը

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՇԱՐԼԵՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

Այունյաց երկիր
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ԱՀՄՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի): «ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 25.08.2016թ.:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ: